

Փրկարար խմբակներ երկ գտած են ռուսական «Իլիուշին-18» տիպի օդանավը, որ Չորեքշաբթի գիշեր մոտ Բրիտանիայի ընթացքին ջախջախում էր Ամարիոյ մէջ: Արձանագրուած են 86 սպանուած 75ը ճամբորդ, 11ը անձնակազմի անդամներ: Զոհերուն մէջ կան նաեւ 6 հայեր: Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան ցաւակցական հեռագիր մը լղեց ռուս իր պաշտօնակից Փոլսինին: Նախագահ Լուսինեան շնորհակալութիւն յայտարարեց, որ ջախջախում վայրը այցելած է, նախագահ վրաստիմիր Փոլսինիի հետ խորհրդակցելէ ետք ըսած է, որ երկու երկիրներուն մէջ առնուազան մէկ օրուան սուգ պիտի հոշակուի: Օդանավը Մոսկուայէն Պարսի կ'ուղղուի: Կրեմլին ըսաւ, որ Փոլսինի երկրի Ապահովութեան հորհուրդի քարտուղար Սերգէյ Իվանովի հրահանգած է քննութիւն բանալ արկածին շուրջ:

ԼԻՔԱՆԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ 30 ՆԱԽԱՐԱՐՆԵՐԷ

Նոր կառավարութեան կազմը յայտարարուեցաւ երէկ, հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լախուտի, խորհրդարանի նախագահ Նեպի Պրորիի եւ նշանակեալ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ տեղի ունեցած հանդիպումներէն ետք:

Արգարեւ, նշանակեալ վարչապետը երէկ առաւօտեան ժամը 8:00ին այցելեց նախագահ Լախուտի եւ անոր ներկայացուց երեսփոխաններու հետ իր ունեցած խորհրդակցութիւններուն արդիւնքները:

Յետմիջօրէին, Հարիրի այցելեց Այնէլթինէ եւ տեսակցեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի հետ:

Ապա Հարիրի Պապատայի պալատին մէջ ժամը 3:15ին երկրորդ հանդիպում մը ունեցաւ նախագահ Լախուտի հետ, աւելի ուշ անոնց միացաւ խորհրդարանի նախագահը:

Աւելի ուշ, նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սեյիմ Լապիքի մամլոյ ասուլիսի մը ընթացքին կարդաց թիւ 4334 հրամանագիրը, որուն մէջ վարչապետ Սեյիմ Հրուի գլխաւորած կառավարութիւնը սահմանադրութեան 53րդ յօդուածին հիման վրայ կը նկատուի հրաժարած: Այս հրամանագիրը կը կրէր նախագահ Լախուտի ստորագրութիւնը:

Այլ հրամանագիրով մը՝ թիւ 4335, հանրապետութեան նախագահը սահմանադրութեան 53րդ յօդուածին եւ նախորդ հրամանագիրին հիմամբ Ռաֆիք Հարիրին կը նշանակէ վարչապետ, իսկ թիւ 4336 հրամանագիրով յայտարարեցաւ նոր կառավարութեան հետեւեալ կազմը:

Ռաֆիք Հարիրի՝ վարչապետ
Իսամ Յարէս՝ փոխ վարչապետ
Պահիթ Թապպարա՝ պետական նախարար
Փիեռ Հըլու՝ պետական նախարար
Մարուան Համատե՝ գաղթականներու հարցերու նախարար

ժորժ Աֆրամ՝ ճարտարարուեստի նախարար
Մոհամէտ Ապուէլ Համիտ Պայտուն՝ ջուրի եւ ուժանիթի նախարար

Թայյալ Արայան՝ պետական նախարար
Սլէյման Յրենժիե՝ առողջապահութեան նախարար

Ասատ Տիապ՝ ընկերային հարցերու նախարար

Պըշարա Մըրհէժ՝ պետական նախարար
Յուատ Սինիորա՝ էլեւմուտքի նախարար
Ապուէլ Ռահիմ Մրատ՝ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար

Միշէլ Մուսա՝ կենսոլորտի նախարար
Քարամ Քարամ՝ զբօսաշրջութեան նախարար

Մոհամէտ Նաժիպ Միքաթի՝ հանրօգուտ շինութեան եւ փոխադրամիջոցներու նախարար
Յուատ Մասա՝ պետական վարչամեքենայի բարենորոգումներու հարցերու պետական նախարար

Սեպուհ Յովնանեան՝ մարմնակրթութեան եւ երիտասարդական հարցերու նախարար
Խայիլ Հըրատի՝ ազգային պաշտպանութեան նախարար

Միշէլ Ֆարսուն՝ պետական նախարար
Ղապի Արիտի՝ տեղեկատուութեան նախարար

Պահիլ Յիէյիան՝ տնտեսութեան եւ առեւտուրի նախարար

Մահմուտ Համմուտ՝ արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար
Սամիր Ժըրր՝ արդարութեան նախարար
Նապիհ Հապիպ Պայտուն՝ պետական նախարար

Ալի Քանսո՝ աշխատանքի նախարար
Ղասսան Սալամէ՝ մշակութի նախարար
Էլիաս Մըր՝ ներքին գործոց եւ քաղաքապետութեան հարցերու նախարար

Ալի Աժաժ Ապտալլա՝ երկրագործութեան նախարար

Ժան - Լուի Քըրտահի՝ հաղորդակցութեան միջոցներու նախարար

Լապիքի նաեւ յայտարարեց, որ նոր նախարարները հրաւիրուած են այսօր, Ուրբաթ առաւօտեան ժամը 9:00ին, Պապատայի պալատին մէջ յիշատակի լուսանկարի համար, որմէ ետք կառավարութիւնը իր անդրանիկ նիստը պիտի գումարէ թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ, ժամը 10:00ին:

Շարք՝ էջ 2

Շ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՐԺԷ ԸԱՅ ԸԱՄԱՅՆՔԻՆ ԻՐԱՒԱԶՐԿՈՒՄԸ

Երէկ յայտարարուեցաւ Լիբանանի նոր կառավարութիւնը, որ կը բաղկանայ 30 նախարարներէ: Այս նոր կառավարութեան մէջ միայն մէկ արտոյտ կազմուած է հայ համայնքին՝ երեսփոխան Սեպուհ Յովնանեան նշանակուած է մարմնակրթութեան եւ երիտասարդական հարցերու նախարար:

Ըստ Թաէֆի համաձայնութեամբ ճշտուած համայնքային հաւասարակշռութեան եւ պաշտօններու միջհամայնքային համեմատութեան, հայութիւնը Լիբանանի էօթը կ'իւրացնէ համայնքներէն մէկն է եւ հետեւաբար, կ'ունենայ իրաւունքը 14 նախարար հաշուող կառավարութեան մէջ մէկ նախարարի (նախընթաց՝ Ս. Հըրի 1989ի կառավարութիւնը, 14 նախարար, մէկ հայ՝ Ս. Խաւանի) հաշուող կառավարութեան մէջ երկու նախարար (նախընթաց՝ Ռ. Հարիրի 30 հոգի հաշուող երեք կառավարութիւնները՝ 1992ին, 1995ին եւ 1996ին, ուր նախարար էին Շ. Պարսունեան եւ Յ. Տեմիրճեան): Անաւանակելի է, որ 30 հոգի հաշուող այս կառավարութեան մէջ եւս պէտք էր նկատի առ-

նուէին երկու հայ նախարարներ: Ստորեւ տրուած իր յայտարարութեամբ Շ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կ'արձանագրէ այս իրաւապակումին փաստը եւ կը պահանջէ պիսիլի սրբագրումը՝ հաւատարմով իր հաւանեան ազգային համախոհութեան անհրաժեշտութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ գիշեր գումարեց արտակարգ նիստ մը, երեսփոխան Սեպուհ Յովնանեանի մասնակցութեամբ եւ հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը:

Շ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կը նկատէ, որ նոր կառավարութեան մէջ հայ համայնքին միայն մէկ նախարարով ներկայացումը կ'իրաւապակէ համայնքը եւ կը խախտէ Թաէֆի համաձայնութեամբ հաստատուած համայնքային հաւասարակշռութիւնը: Կ. Կոմիտէն կը հաւատայ, որ համայնքներու ներկայացուցիչներու մասնակցութիւնը որեւէ կառավարութեան կախեալ է անոնց իրաւունքներուն յարգումէն:

Հակառակ այն իրողութեան, որ երեսփոխան Սեպուհ Յովնանեանի անձով Շ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացուած է այս կառավարութեան մէջ, Կ. Կոմիտէն կը հաստատէ, որ 30 նախարարներէ բաղկացած կառավարութեան մէջ հայ համայնքը պէտք է ներկայ ըլլայ երկու նախարարներով, ինչպէս եղած է անցեալ կառավարութիւններու պարագային:

Կ. Կոմիտէն կառավարութեան կը պահանջէ սրբագրել այս խախտումը, եթէ ան անկեղծ է ազգային համախոհութեան իրագործումի իր ճիգերուն մէջ:

26 Հոկտեմբեր 2000
Պէյրոս

ՊԱՂԵՍՏԻՆՑԻ ՄԸ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ ԻՍՐԱՅԷԼԷԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԻ ՄԸ ԴԵՄ



Իսրայէլացի զինուորներ՝ պաղեստինցիին հեծանիւն մնացուկին շուրջ:

Պաղեստինցի մը երէկ անձնասպանական գործողութիւն մը կատարեց Կապայի մէջ գտնուող իսրայէլեան պիտուրական կեդրոնի մը դէմ, ականուած հեծանիւնով մը սուրալով կեդրոնին ուղղութեամբ: Ամիւն մը ի վեր ծայր տուած բախումներուն ընթացքին առաջին անգամ

ըլլալով անձնասպանական գործողութեան դիմեցին պաղեստինցիները: Երէկուան միջադէպը, որ իսրայէլացի մէկ վիրաւոր պատճառեց, ենթադրել կուտայ, որ տագնապը տակաւին հեռու է լուծումէ: Բանակը ամբաստանեց իսլամական

ժիհատ կազմակերպութիւնը, որուն ղեկավարը՝ Ֆաթիհ Շուքարի ճիզդ հինգ տարի առաջ սպանուած էր Մալքայի մէջ: Իսլամական ժիհատի կողմէ մեկնաբանութիւն չկատարուեցաւ: Պաղեստինեան ազգապետութեան աղ-

Շարք՝ էջ 2

ՆԱԽԱԿԱԿ ՀՈՉԱՐԵԱՆԻ ՈՒՂԵՐՉԸ՝ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՃԻՐԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան 27 Հոկտեմբեր 1999ի ոճիրին առիթով երէկ հրապարակեց ուղերձ մը:

Նախագահ կը յայտնէ, որ այդ ոճրագործութիւնը ոչ միայն մեծ հարուած էր մեր ժողովուրդին, որ կորսնցուց իր արժանաւոր պատկերները, այլեւ՝ պետութեան: «Ծանր փորձութեան ենթարկուեցան երկրի կայունութիւնը, սահմանադրական կարգը եւ միջազգային հեղինակութիւնը: Այսուհանդերձ, պետական կառույցները եւ հասարակութիւնը միասնաբար կրցան դուրս գալ դժուարին այդ փորձութենէն եւ երկրին կենսագործութիւնը վերադարձել բնականոն հունին», կը նշէ նախագահ Քոչարեան:

«Այս ոճրագործութիւնը ընկերութեան բոլոր խաւերուն կողմէ խստագոյնս կը դատապարտուի եւ պիտի դատապարտուի գալիք սերունդներու կողմէ», կ'ըսէ ան:

Նախագահ Քոչարեան կը յայտնէ, թէ բոլորին պարտքն է գիտակցելու, որ պոհերուն յիշատակը վառ պահելու յաւաքով ճամբան անոնց հայրենասուէր գործը շարունակելն է՝ յանուն այն բարգաւաճ Հայաստանին, որ երապած են հայրենի պետականութեան կայացման նուիրած նահատակները:

27 Հոկտեմբերի ոճիրին պոհերուն յիշատակին, Կիրակի, 29 Հոկտեմբերին Ս. Էջմիածնի Մալր տաճարին մէջ պիտի կատարուի հոգեհանգստեան արարողութիւն:

(ԱՐՄԵՆՓՐԷՍ)

Յ. Յ. Դ. ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ԱՆԴԱՄԵՆԵՐՈՒ ՅԱՆԳԻՊՈՒՄԸ՝ ՆԻՔՈՒԱԵՒԻ ՅԵՏ

Շ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի անդամներ Շ. Թադեոսեան, Գ. Մանուկեան եւ Է. Ղապարեան Հինգշաբթի օր Շ. Յ. Դ. «Սիմոն Վրացեան» կեդրոնին մէջ հանդիպում ունեցան Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպանութեան խորհրդական Նիքոլայելի հետ:

Հանդիպումին քննարկուեցան Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակին, հայ-ռուսական յարաբերութիւններու վարգացման եւ շրջանային իրավիճակին վերաբերող հարցեր:

Շ. Յ. Դ. ՅԱՅԱՍՏԱՆԻ «ՆԻԿՈՒ ԱՂԱՍԷԱՆ» ՈՒՍՆՈՂՈՒՄԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՆԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԸ

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ ԲՈՂՈՔԻ ՔԱՅՆԱՐՇԱԻ

Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներու Տան օրակարգէն Հայկական Յեղապանութեան բանաձեւին դուրս բերուելուն առիթով, Շ. Յ. Դ. Հայաստանի «Նիկոլ Աղբալեան» Ռուսոնղական Միութեան նախաձեռնութեամբ երէկ Երեւանի մէջ տեղի ունեցաւ բողոքի քայլարշաւ մը:

Շարք՝ էջ 2

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ ՇՈՒԷՏԻ ՄԷՁ

Երեւան, 26 (ԱՐՄԷՆՓՐԷՍ) — Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Շուէտ այցելութեան շրջագիծին մէջ Չորեքշաբթի օր Հանդիպում ունեցաւ շուէտացի իր պաշտօնակից Աննա Լինտի Հետ: Հանդիպումին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններու վարգացման կարելիութիւնները: Նախարար Օսկանեան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացը: Անոնք քննարկեցին նաեւ միջազգային կազմակերպութիւններու շրջագիծին մէջ գործակցութեան կարելիութիւնները՝ նկատի ունենալով, որ Յունուար 2001ին Շուէտ կը ստանձնէ Եւրոպական Միութեան նախագահութիւնը: Այդ առումով կարեւոր նկատուեցաւ Ա. Լինտի 2001ին շրջան այցելութեան ծիրէն ներս Հայաստան այցելութիւնը:

Նախարար Օսկանեան Հինգշաբթի օր Հանդիպում ունեցաւ Շուէտի խորհրդարանի նախագահ Պ. Տաշի Հետ: Նոյն օրը նախարար Օսկանեանի զխաւորած պատուիրակութիւնը եւ Հայ գործարարներ մասնակցեցան Հայաստան — Շուէտ գործարար Համաժողովին, որուն ընթացքին քննարկուեցան տնտեսական գործակցութեան կարգ մը ծրագիրները: Պատուիրակութիւնը Հանդիպում ունեցաւ նաեւ շուէտացի Համայնքին Հետ:

ՆԱԽԱՐԱՐ ՆԱԶԱՐԵԱՆԻ Ի ՊԱՏԻ ՈՂՋԵՐԹԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կենսոլորտի նախարարության պաշտոնեաները երկ րոշման հանդիսությունը կազմակերպեցին ի պատի նախարար Արթուր Նապարեանի: Անոնք յուրանուէր մը յանձնեցին Նապարեանին, դրուատելով անոր անսակարկ նուիրումը: Նախարարութեան ընդհանուր տնօրէն Պերճ Հաճեան իր խօսքին մէջ վերաբերուի նախարարին եւ անձնակազմին գործակցութեան շնորհիւ ձեռքբերուած արդիւնքը, հակառակ բազմաթիւ դժուարութիւններուն:

Նապարեան դրուատեց նախարարութեան անձնակազմին գործունէութիւնը եւ կոչ ուղղեց, որ անոնք շարունակեն իրենց աշխատանքը՝ վերջ դնելու համար կենսոլորտի շահագործումին:

ԴԱՏԱԻՈՐ ԺՈՐԺ ՂԱՆԹՈՒՍ ՍՏԱՅԱԻ ԶՕՐ. ՄԻՇԷԼ ԱՈՒՆԻ ԹՂԹԱԾՐԱՐԸ

Արդարադատութեան խորհուրդին կողմէ նշանակուած քննիչ-դատաւոր ժորժ Ղանթուս երկ րոշման դատախազութեան ստացաւ նախագահ Քամիլ Շամունի դէմ կատարուած մահափորձին եւ իշխանութեան բռնութեամբ տիրացած եւ պետական գումարներ մսխած գործ: Միշէլ Աունի թղթածրարները: Ղանթուս սկսաւ թղթածրարներու ուսումնասիրութեան, որուն աւարտին պիտի որոշէ որդեգրելիք միջոցառումները:

ՊԱՏՐԻԱՐՔ ՍՖԷՅՐԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրբլի երկ րոշման կատարուելու ներքին իր ուշադրութիւնը պետք է կեդրոնացնէ տնտեսական եւ ընկերային տագնապներու դարմանումին վրայ:

Մարտիններու Սֆէյր պատրիարքին հետ իր ունեցած տեսակցութեանէ ետք կատարուած իր յայտարարութեան մէջ Ֆրբլի նաեւ ըսաւ, որ Լիբանանի մէջ ժողովրդավարական կեանք գոյութիւն պիտի չունենայ, եթէ խորհրդարանը չվերատիրանայ վստահութեան քուէ կոչուած իր Կէնթին:

Իր կարգին, երեսփոխան Ֆարես Պուէյլ Սֆէյրի հետ քննարկեց երկրին ընդհանուր պարագայումները, նկատել տալով, որ այս հանգրուանին շրջանային, ինչպէս նաեւ ներքին քաղաքական ու տնտեսական փոթորիկները դիմագրաւելու համար անհրաժեշտ է «խորհրդանիշ»ներու կառավարութիւն մը, որ կը ներկայացնէ հայրենիքի տարբեր հատուածները: «Կառավարութեան կազմութեան հարցով պետք է բարձրանայ վզայնութիւններէն վեր», ըսաւ ան:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ՄԸ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

բիւրներ հաստատեցին, որ անձնասպանական գործողութեան մը ընթացքին պաղեստինցի մը սպաննուած է:

Իսրայէլեան բանակին մէկ բանբերը յայտնեց, որ գործողութիւնը կատարողը պատանի մըն էր: Բանբերը աւելցուց, որ ընդվզեցուցիչ է տեսնել, որ պաղեստինեան իշխանութիւնը երեխաներով կը մղէ իր պայքարը եւ դպրոցական աշակերտ մը գիրքերու պայուսակով կ'ուղարկէ իսրայէլացիներուն դէմ:

Աւելի ուշ, սակայն, գործողութիւնը կատարող պաղեստինցիին ընտանիքը յայտնեց, որ ան 24 տարեկան է եւ թէ իսլամական օրհատի հետեւորդ է: Ընտանիքը աւելցուց, որ հպարտ է անոր կատարած արարքով:

Իսրայէլացի բարձրատիճանի զինուորականներ նախատեսած էին, որ անձնասպանական գործողութիւններ պիտի կատարուին ծայրայեղականներու կողմէ: Համա եւ իսլամական օրհատ իսրայէլի տասնեակներով զոհեր պատճառած են անձնասպանական գործողութիւններու միջոցով:

Կապի զործողութեան քանի մը ժամ տառջ պակտովական մարտի պաղեստինցի ու իսրայէլացի պատասխանատուներ հանդիպում մը ունեցած էին: Իսրայէլացի պաշտօնատարները յայտնեցին, որ մթնոլորտը դրական էր, թէ կարելի չէ եղած յուժուժ մը յանգի:

ԱՐԱՅԱՐ ԱԲԵԼԻՆ ՊԵՏԵ ԸՆԷ ԿԸՄԵ ԸԼԻՆԹԸՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլքլորը յայտնեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ շատ աւելին կրնայ ընել վերջ տալու համար բռնարարքներուն: Քլորը սակայն չմեղադրեց Արաֆատը, մէկ ամիսի ի վեր ծայր տուած բախումները:

պատճառած ըլլալու յանցանքով:

Քլորը, որ կը փորձէ համոզել Արաֆատն ու իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաքը, որպէսզի Ուաշինկթոն այցելեն տեսակցութիւններ ունենալու համար, ըսաւ, որ ոչ Արաֆատի եւ ոչ ալ Պարաքի ամբողջական հակակշիռին տակ կը գտնուի կացութիւնը: Քլորը դիտել տուաւ, որ Արաֆատ կրնայ պաղեստինեան ճշմունք բանեցրնել, որպէսզի բախումները մեղմանան:

Քլորը ըսաւ նաեւ, որ կ'ուզէ վերսկսած տեսնել խաղաղութեան գործընթացը: Այս փափաքը իրականացնելու համար, պաղեստինցիներն ու իսրայէլացիք պետք է գործադրութեան դնեն Շարմէշէյի համաձայնութիւնը:

Միւս կողմէ, պաղեստինցի եւ իսրայէլացի ղեկավարներ չեն աճապարեք Ուաշինկթոն ուղղուելու՝ ընդառաջելով Քլորի հրաւերին: Պարաքի խորհրդատու Տանի Եաթոմ ըսաւ, որ վարչապետը կը մերժէ Ուաշինկթոն այցելել, այնքան առեւ, որ բախումները կը շարունակուին:

Արաֆատի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա իր կարգին յայտնեց, որ պաղեստինցի ղեկավարը տրամադիր չէ Պարաքի հետ հանդիպում մը ունենալու: Ապու Ռուտայնա աւելցուց, որ Արաֆատ պատրաստ է որեւէ առեւ տեսակցութիւն ունենալու Քլորի հետ, սակայն Պարաքի հետ հանդիպումը կանխահաս է:

ՈՒՍՈՒԱ ԻՍԿԱԿԱՆ ԸԱՅԼԵՐՈՒ ԿՈՉ ԿՈՂԴԷ

Ռուսիա կոչ ուղղեց պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն, որ շօշափելի միջոցառումներ որդեգրեն վերջ տալու համար արհեստագործութեան, որ ցարդ 132 զոհ խլած է:

Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակ-

ւած յայտարարութիւնը կոչ կ'ուղղէր նաեւ իրարմէ բաւական հեռու պահելու պաղեստինցիներն ու իսրայէլեան ուժերը: Երկու կողմերը պետք է նաեւ յարգեն սրբատեղիները:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին ըսաւ, որ Ռուսիա եւ Եւրոպա աւելի մեծ դերակատարութիւն պետք է ունենան Միջին Արեւելքի խաղաղութեան հաստատման գործընթացին մէջ:

Միւս կողմէ, արտաքին գործոց փոխ նախարար Վասիլի Սրետին յայտնեց, որ Փութին կ'իյնք առաքելութեամբ մը արաբական երկիրներ ուղարկած է, քննարկելու համար շրջանը յուզող գլխաւոր հարցերը, որոնց կարգին է Միջին Արեւելքի խաղաղութիւնը: Հնկտեմբեր 31էն Նոյեմբեր 8ի միջեւ Սրետին պիտի այցելէ Քաթար, Պահրէյն, Բուէյթ, Մեյտաական Արաբիա եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

ՖՐԱՆՍԱ ՅՈՒՆԵՏԵՄ Է

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Իւպէր Վետրին երկ րոշման ար Փարիզ մտահոգ է կացութեամբ, որ կը թուի թէ հեռու է բարելաւումէ մը: Վետրին աւելցուց, որ պաղեստինցիներն ու իսրայէլացիները հասած են այն պիսի հանգրուանի մը, ուր տիպալոր անկարելիութիւն կը նկատուի: Վետրին դիտել տուաւ նաեւ, որ երկու կողմերը մտած են «միակողմանի որոշումներու» հանգրուանի:

Վետրին աւելցուց, որ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ Միջին Արեւելքի մէջ պաղեստինցիներն ունեցող այլ երկիրներ պետք է աշխատին սահմանափակելու համար վնասներ խաղաղութեան գործընթացը կարելի եղած չափով փրկելու համար:

ՄԱԿի մէջ պաղեստինցի դէտ Նասեր Քիտուա Ապահովութեան խորհուրդին կը պահանջէ արտակարգ նիստ մը գումարել, ՄԱԿի ուժ ուղարկելու համար պաղեստինեան շրջանները, որպէսզի պաշտպանեն բնակչութիւնը իսրայէլեան յարձակումներէն:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՏՈՔԹ. ԶԱՔԱՐ ՄԿՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Չորեքշաբթի, 25 Հոկտեմբերին, «Ֆէսիսիա Ինթըրքոնթինէլը» պանդոկին մէջ, հոգնաւորութեամբ առողջապահութեան նախարար Քարամ Քարամի, տեղի ունեցաւ բացման արարողութիւնը Լիբանանի Սրտաբաններու Ընկերակցութեան եւ Սրտի Վիրաբուծութեան Միջազգային Ընկերակցութեան Տրոյ միջազգային համագումարին:

Պաշտօնական հիւրերու կողքին ձեռնարկին ներկայ էին երեսփոխան Ս. Յովնանեան, Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, ԼՕՍԻ Երջանային Վարչութիւնը եւ «Ա. Պրիդուսեան» կեդրոնը ներկայացնող պատկաւորներ:

Համագումարին ընթացքին Լիբանանի Սրտաբաններու Ընկերակցութեան նախագահ տոքթ. Ն. Թիմանի գնահատական խօսք ըսաւ հանգուցեալ սրտաբան տոքթ. Չաքար Մկրեանի մասին եւ այս առիթով յուշանուէր մը յանձնեց անոր կնոջ՝ Յասմիկ Մկրեանի, իսկ ներկայներուն բաժնուցեալ տոքթ. Չ. Մկրեանի կենսագրականը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ րոշման քաղաքական իր պարանքին մէջ թղթակիցներու հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ, որ նորահաս կառավարութիւնը արտայայտութիւնն է ժողովուրդի կամքին. զոր արտայայտած են երեսփոխանները եւ անկաւ կազմուած է գործակցաբար հանրապետութեան նախագահին հետ:

«Երեսուն նախարարներէ բաղկացած կառավարութիւնը պետք է ներկայացնէ ազգային համախոհութիւնը, որ նկատի առնուած է, ինչպէս նաեւ տնտեսական տագնապը, զոր պետք է դարմանել», ըսաւ Հարիրի, աւելցնելով, որ այս կառավարութիւնը «համախոհութեան եւ աճի» կառավարութիւնն է:

«Աշխարհի վրայ չկայ կառավարութիւն մը, որ կը համախմբէ երկրին բոլոր քաղաքական կողմերը. կան ընդդիմադիրներ եւ աշխատատեղեր, բայց կառավարութիւնը կը ներկայացնէ Լիբանանի ժողովուրդին եւ քաղաքական հիմնական ուժերուն մեծ մասը», ըսաւ ան:

Կառավարութեան մէջ քրիստոնեաներու եւ յատկապէս մարոնիներու ներկայացուցչութեան մասին հարցումի մը պատասխանելով, Հարիրի ըսաւ, թէ չ'ուզէր համայնքային նիւթեր արծարծել. շեշտը դնելով, որ կառավարութիւնը խորհրդարանի կամքին անկեղծ արտայայտութիւնն է եւ խորհրդարանին պիտի ներկայանայ վստահութիւն ստանալու համար:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ ԲՈՂՈՔԻ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

Հարիրաւոր ուսանողներ Երեւանի պետական եւ ճարտարագիտական համալսարաններէն սկսան իրենց քայքայուած ուղղուելով դէպի Մ. Նահանգներու դեսպանատուն:

«Նիկոլ Աղբալեան» Ռուսանդական Միութեան ներկայացուցիչը դեսպանատան մօտ կարդաց Ներկայացուցիչներու Տան նախագահ Տենիս Հասթըրթի ուղղուած հայ երիտասարդութեան նամակը:

Նամակը դեսպանատան ներկայացուցիչին միջոցով յանձնուեցաւ դեսպան Մայքըլ Լեմբինին, որ հանդիպում չունեցաւ ցուցարարներուն հետ: Դեսպանին բանբերը յայտնեց, որ Լեմբին խոստացած է անձամբ նամակը հասցնել Տ. Հասթըրթին:

Ռուսանդները դեսպանատան մուտքին մօտ այրեցին Թուրքիոյ դրօշակը:

(ԱՐՄԵՆՓԻԵՍ)

ՄԱՃԱԶԳ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Հաւուրը Գարակէօպեան հաստատութիւնը իր հանգուցեալ բարերարներուն ՄԻՀՐԱՆ, ԶԱՊԵԼ ԵՒ ԼԵՅԼԱ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆՆԵՐՈՒ մահուանց յիշատակին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Հոկտեմբեր 2000, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:
ՀԱՆՈՒՐԸՑ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԵՏԱԶԳՈՒՄ
«Ազիրեան» ակումբի կազմակերպած վիճակահանութիւնը, որ տեղի պիտի ունենար Երեւանի, 26 Հոկտեմբեր 2000ին, յետաձգուած է: Նոր թուականը կը ծանուցենք մամուլով:
«ԱՅԻՐԵԱՆ» ԱԿՈՒՍՐԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԸ

ԸԱՅ ԳԻՐԵԻ
ՏԱՐԵԿԱՆ ԶԵՂՉ — ՎԱՃԱՌԸ
ՅՈՒՅԱՐԱՆԴԵՍ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ
ՄԻՆՉԵՒ
70%
11Ը 19 ՆՈՅԵՄԲԵՐ 2000

ՈՒՍՈՒՅԻՉ ԿՈՒՉՈՒԻ
Միջնակարգի աշակերտի համար, անգլերէն թեքումով, Մթբալէպի շրջան: Հեռ. 04-915446:
ԾԱԽՈՒ ԶԱԼԷ
Սաթելիթի մէջ: Հեռ. 03-838120:
ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
Սգիտի մէջ: Հեռ. 03-838120:
ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
Գործատեղիի յարմարութիւն: Պոսթ Կամուր, Master Mail մայր պողոտայ, Ա. յարկ: Հեռ. 03-398003:

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՐԵՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ՔՈՒԼԵՃ ՅԵՏԱԶԳՈՒՄ
Ազգային Սուրեն Խանամիրեան քոլեճի վիճակահանութիւնը, որ տեղի պիտի ունենար Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2000ին, յետաձգուած է անորոշ թուականով:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԵՂԻՍԱԲԵԹ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 4:00ին:
Յուղարկուելու թեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Երեւանի Հայ Կաթողիկէ պատրիարքարանի մատարան մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պօղոս Համուր Ազգային գերեզմանատունը:
Ներկայ ընդունելի իբրեւ մահագո:
Ցաւակոչութիւններ պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանի, Երեւանի, «Ատիպ Իմաք» փողոց, «Շորիգոն» շէնք, Հինգշաբթի 26, Ուրբաթ 27 եւ Շաբաթ 28 Հոկտեմբերին:

Միջազգային Քաղաքական

ՌՌԻՍԻԱ ՅՈՅՍԵՐ ԿՈՒ ՏԱՅ ԱԶՐՊԵՅՃԱՆԻՆ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինը Ազրբայճան նոյնիսկ սկիզբը ծրագրուած այցելութիւնը երեւանի մէջ եւս կը սպասուի մեծ հետաքրքրութեամբ:

Ռուսիոյ եւ Ազրբայճանի միջեւ յարաբերութիւններու բարեկարգման առաջին նշանները ի յայտ եկան այս տարուան սկիզբը: Մոսկուայի մէջ կայացած տեսակցութեան մը ընթացքին ազերի նախագահ Հայտար Ալիբեկովը հարցազրուեց Ազրբայճանի նախագահ Իսմայիլ Կրիստիանովի հետ: Պրոնք անուղղակիօրէն հաստատեցին այն միտքը, թէ կրիստիանովի արուեստական լարուածութիւնը կը ստեղծէ Ազրբայճանի եւ Հայաստանի միջեւ եւ կ'աշխատի խոչընդոտելու իրարի դրացնութեան միջոցառումը եւ երկու երկիրներուն միջեւ քաղաքական եւ տնտեսական բնականոն համագործակցութեան կարելիութիւնները: Հիմնականօրէն, Ազրբայճան Ռուսիայէն պահանջեց, որ հաստատէ իր հողային ամբողջականութիւնը, այլ խօսքով՝ ռուս պաշտօնատարները ու քաղաքագետները պէտք է հրաժարեն իրենց հարաւոր դրացին ամբողջականութեան պահանջին իրենց հարաւոր ամբողջականութեան պահանջին դիմաց: Միջոցառումը կը վերաբերէր Ալիան Մասխատովի վարչակարգին ցուցարբերուած Պաքուի նեցուկին: Հոս Ալիբեկովը կեցւածք ցուցաբերեց՝ ըսելով, որ Ազրբայճան չի կրնար հանդիստ մնալ, երբ Ռուսիա կը մերժէ իր հողային ամբողջականութիւնը, հետեւեալ Ազրբայճան իրեն կը վերապահէ նմանօրինակ քայլեր առնելու իրաւունքը:

Մոսկուայի եւ Պաքուի միջեւ յարաբերութիւններու բարելաւումէն ետք տեղեկութիւն մը մէջտեղ եկաւ, թէ Ազրբայճան, արեւմտամէտ արեւելում ունենալով հանդերձ, պատրաստ է, սկզբունքով, վերսկսելու կապերն ուստուրի խարխիւրի կարգադրման շուրջ քննարկումներուն, միշտ չեղեցով, որ Ազրբայճան կը մերժէ օտար զինուորական խորխիւրներ ունենալ իր հողերուն վրայ եւ ուստուրի զօնով համաձայնութիւն մը կարելի է գոյացնել այս պահանջը նկատի առնելով միայն: Կապերն ուստուրի ռազմագլխատան մեծ կարեւորութիւն ունի ղէպի հարաւ հակօրինակ պաշտպանութեան համակարգի ստեղծման համար:

Ամրան սկիզբը ռուսական մամուլը նուազեցուց իր հակազդեցական քարոզչութիւնը: Նոյնը պատահեցաւ նաեւ Ազրբայճանի մէջ, ուր հասկացողութիւն մը սկսաւ Ձեռնիւրջ հարցին մէջ ռուսական ռազմավարութեան նկատմամբ: Դէպքերու այս կտորով փոփոխութիւնը ղօտուար թէ կարելի ըլլայ վերագրել Ազրբայճանի մէջ ռուսամէտ ուժերուն, նկատի առած անոնց այլազանութիւնը:

Նախ եւ առաջ կան զանազան համայնավար կուսակցութիւններ, որոնցմէ ոմանք իրարու միացած են, եւ որոնք կը համարուին Ազրբայճանի հակաարեւմտեան քաղաքական ուժերը՝ ռուսամէտ թերուումով: Սակայն անոնք պէտք եղած քաղաքական կշիռը չունին իշխանութեան գլուխ գաղուն: Քիչ մը աւելի լուրջ ղիբք կը ներկայացնէ Ազրբայճանի Ընկերակար- ժողովրդավար կուսակցութիւնը, որ առիթ չի փախցնել Արեւմուտքը քննադատելու, սակայն նաեւ չ'որդեգրելու բացայայտօրէն ռուսամէտ կեցողութիւնը:

Ասոնցմէ զատ կայ ըբարձր պաշտօններ ստանձնած նախկին համայնավարներու խաւը, որ կարգ մը պայմաններու տակ կրնայ ընկերային հիմք հանդիսանալ ռուսական ազդեցութեան համար: Նկատուելի թիւով հակաարեւմտեան, ռուսամէտ տարրեր կան իշխող «Ճեի Ազրբայճան» կուսակցութեան մէջ:

Բացայայտ է, որ նախկին նախագահ Ալազ Մուսթաֆայովը իշխանութեան վերադարձնելը կարելի կ'ըլլայ, երբ երկրին ռուսամէտ ուժերը շօշափելի կշիռ ձեռք կը ձգեն:

Ազերիները յուսախար չեն եղած արեւմտեան քաղաքականութիւններէն, այլ կ'անդրադառնան, որ արեւմուտամէտ արեւելում ունենալը, առնուազն Ազրբայճանի ընտրած ձեւով, պէտք եղած արդիւնքը չէ տուած երկրին մէջ ռուսամէտ տրամադրութիւնները փոխելու:

Հետաքրքրական կայութիւն մը կը ստեղծուի: Ռուսիա իրապէս մտահոգ չէ Լեռնային Ղարաբաղի հարցով, այլ մտահոգ է հարցին լուծման մէջ Միացեալ Նահանգներուն ազդեցիկ ղիբ ունենալու կարելիութեամբ: այս է պատճառը, որ Ռուսիա շատ մօտէն կը հետեւի Քոչարեան - Ալիբեկովի թանկութիւններուն եւ հաշտ աչքով չի դիտար Միւսքի խմբակի եւ ամերիկացիներուն շրջան այցելութիւնները: Իսկ Ազրբայճանի պարագային, անկա շատ ուրիշ հարցեր ունի Ռուսիոյ հետ, եւ Լեռնային Ղարաբաղի հարցը ղօտուար թէ օգտագործուի ռուսներուն կողմէ ներկայ պայմաններուն մէջ:

Այս բոլորին լոյսին տակ, Ռուսիա որոշեց փորձարկել կայութիւնները՝ նախքան որեւէ «քաղաքական տեղափոխութիւն» Պաքուի մէջ: Հայտար Ալիբեկովի այն ալ հետեւած է փրօ-Ատլանտեան ղիծին, սակայն չհետեւելով էտուարտ Շեարտսնաձէի օրինակին՝ ան երբեք ղուսերը չէ գոցած Ռուսիոյ ղիծաց: Ալիբեկովի ամբողջական վիճակի վատթարացումը լաւ առիթ է կայութիւնը քննելու եւ կարգ մը ղիծումներ ընելու Պաքուին:

Ենթադրելով, որ Պաքուի մէջ Փութին կը հաստատէ Ազրբայճանի հողային ամբողջականութիւնը: Ասիկա անհրաժեշտ քայլ մըն է Ռուսիոյ համար, որպէսզի ցոյց տայ, թէ ինք հաւասարակշռուած քաղաքականութիւն կը վարէ Հարաւային Կովկասի մէջ, եւ թէ Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ Ռուսիա չի պաշտպանել Հայաստանը, մինչ Միացեալ Նահանգները՝ Պաքուն: Հետեւեալը Մոսկուա լայ կը ձգէ Պաքուի հետ բանակցութեան կարելիութիւնները: Անկախ անկէ, թէ ով կ'ըլլայ անոր նախագահը:

Իսկ «քաղաքական տեղափոխութեան» գծով Ռուսիա հաւանաբար կը մտահոգուի, եթէ Ազրբայճանի խորհրդարանին նախկին նախագահ Ռասուլ Կուլիբեկովը ամերիկեան զովանաւորեալ մըն է:

Վերջին 10 տարիներուն ընթացքին Պաքու յաճախ փորձած է Ռուսիան «խլել» Հայաստանէն: Հակառակ անոր, որ լոյրը նախկին փորձերը ձախողած են, սակայն կրիստիանովի փոփոխութիւնը, որ միշտ պատրաստ պէտք է ըլլայ առիթը օգտագործելու եւ իր գործակիցին տալու այն, ինչ որ ան կ'ուզէ:

Հայաստանի պարագային, Քոչարեանի Մոսկուա վերջին այցելութիւնը յաջող էր եւ հեռանկարներ կան Հայաստան - Ռուսիա զինուորական եւ քաղաքական համագործակցութեան զարգացման գծով: Հակառակ անոր, որ Մոսկուա մեծ սէր չունի Քոչարեանի հանդէպ, սակայն անիկա սերտօրէն պիտի գործակցի անոր հետ եւ միեւնոյն ատեն շարունակէ ուրիշ ղէմքերու եւ ուժերու փոխադրումը (այս եղած է միշտ ռուսական արտաքին քաղաքականութեան փրկիտիպայութիւնը): Յստակ է նաեւ, որ եթէ նոյնիսկ կան այդպիսի ուժեր, ապա անոնք չեն կրնար լրջօրէն մրցիլ Քոչարեանի հետ:

«Իսլամ ծայրայեղականներու» քարոզ վարպետօրէն խաղաղէն ետք, Ռուսիա այսօր կը քաղէ իր քաղաքական գործնապայտութեան պտուղները: Թուրքիան կը սահմանափակուի իր հարաւոր հարաւորեւ քաղաքականութիւնը վարել Միացեալ Նահանգներուն հետ: Ըստ երեւոյթին, Աֆղանիստանէն եւ այլ շրջաններէ (օրինակ՝ Չեչենիայէն) եկող կրօնական փայտեղութեան վտանգը լրջօրէն կը մտահոգէ Մոսկուայի եւ Ռուսիայի կողմէն, որ կրնայ կանցնել իր քննադատութիւնները Հիւսիսային Կովկասին մէջ կրեմլին ռազմավարութեան գծով, նկատի առնելով, որ Շարի Պաքու պատրաստակամութիւն յայտնած է իրարայլի ղէմ ղիծուողական գործողութիւններ կատարելու:

Վերոյիշեալները քիչ թէ շատ կը համապատասխանեն Հաւաքական Ապահովութեան Դաշինքի (Ռուսիա, Ղազախստան, Պիլիուստիա, Հայաստան, Խրըրզգիստան) ծիրէն ներս աշխատանքներուն: Ինչպէս նաեւ ռազմավարական զանազան շրջաններու մէջ, որոնց կարգին՝ Կովկասի մէջ զինուորական միացեալ միակողմէն ճաստատելու մասին վերջերս Պիլիւստի մէջ որդեգրուած բանաձեւին: Այստեղ Հայաստան եւ Ռուսիա իրարու վրայ կրնան հակազդել:

ՎԱԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ»

ԷՔՍՈՆՄՈԲԻԼԻ ԾԱՆՈՒՅՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ 907 ՅՕԴՈՒՎԾԻՆ

Ստորեւ կու տանք «Ինթըրնէշնալ Տերրիթորիալ Թրիպիուրն» թերթին մէջ լոյս տեսած ԷքսոնՄոպիլ քարիւղի ընկերութեան ծանուցումը:

Նշելով, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը բարդ հարց է եւ իրենք չեն ուզեր կողմնակալ ըլլալ, ԷքսոնՄոպիլ կը յայտնէ, որ Մ. Նահանգներու Քոնկրէսին որոշումով Ազրբայճանի դէմ հաստատուած պատժամիջոցները պէտք է շնջուին:

Ընկերութեան համաձայն, պատժամիջոցները պղծեցիկ չեն, կը դժուարացնեն Մ. Նահանգներու միջնորդական ճիշդ բանակցութիւններու գործընթացին մէջ եւ կը խոչընդոտեն Ազրբայճանի քարիւղի եւ կապի աղբիւրներու վարգաւան կարելիութիւնը:

ԷքսոնՄոպիլ կը նշէ, որ պատժամիջոցները կը հակասեն Մ. Նահանգներու արտաքին քաղաքականութեան շահերուն: Յատկանշական է, որ Ազրբայճանի քարտէսին մէջ նկատի չեն առնուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան սահմանները: Այսպէս, ԷքսոնՄոպիլ բացայայտօրէն կը պաշտպանէ Ազրբայճանի հողային ամբողջականութիւնը եւ Ազրբայճանի ի նպաստ կը կողմնորոշուի Լեռնային Ղարաբաղի հարցին կապակցութեամբ:

Sanctions with gums

Quick quiz: Against which one country among all those that emerged from the Soviet Union does the United States maintain sanctions? The answer is Azerbaijan. Population eight million, a strategically important country with rich natural resources located between Russia and Iran. Azerbaijan has been involved in an ethnic conflict with Armenia over an area called Nagorno-Karabakh. The unresolved conflict has resulted in large numbers of refugees on both sides, including one million Azerbaijanis. Since 1992, U.S. legislation has prohibited official aid to Azerbaijan for its role in the conflict with Armenia. The Nagorno-Karabakh conflict has also been a major factor in the regional oil and gas pipeline. The U.S. government's policy of maintaining sanctions is in the position of maintaining a balance between the interests of the region and the interests of the United States. The U.S. government's policy of maintaining sanctions is in the position of maintaining a balance between the interests of the region and the interests of the United States.

ExxonMobil

նային Ղարաբաղի հարցին կապակցութեամբ: Այս եւ այլ միջոցներով քարիւղի միջազգային ընկերութիւնները կը փորձեն ազդել Մ. Նահանգներու արտաքին քաղաքականութեան վրայ եւ միջամտել Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին ի նպաստ Ազրբայճանի:

Lantern
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Տեղ. 01-268866
Էլ. 03-695399

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՄԻՐԱՇԱՀԻ ԱԶՐՊԵՅՃԱՆԸ, ՍԱԿԱՅՆ ՉԻ ՄՈՌՆԱՐ ՆԱԵԻ ԶԱՅՆ ԶԳՈՒՇԱՑՆԵԼ

Նախագահներու քննադատութիւնները կը փորձեն «անկայունացնել երկու երկիրներուն (Ազրբայճան եւ Ռուսիա) միջեւ բարեկամական լաւ յարաբերութիւնները»:

Միեւնոյն ատեն կարգ մը ռուս մեկնարանները քննադատեցին Ազրբայճանի խորհրդարանական ընտրութիւններուն հանդէպ Մ. Նահանգներու կեցողութիւնը: «Նիւյու-Յայպիթի» մամուլը կ'ազդեցիկ թերթը ամերիկացի պաշտօնատարները մեղադրեց այն վերաբերմունքին համար, «որ կարծես թէ քաղաքական ճշմարտութեան մենաշնորհ ունին, եւ կը փորձեն նախկին խորհրդարանի հանրապետութիւններուն ժողովրդավարութեան գոտիը տալ»: Թերթին համաձայն, այսպիսի քաղաքականութեան պատճառով կեղբոնական Ասիոյ հանրապետութիւնները արդէ կ'ունակ դարձուցած են Մ. Նահանգներուն: Թերթը կը նշէ, որ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութիւնը Ազրբայճանի ընտրութիւններու վերաբերեալ «որչինչ է՝ բացի ղեկիւղիցէն հետ հարցազրույցի մը ընթացքին»: «Մէկ կողմէ Մ. Նահանգները կ'անցնեն իրենց հիմքերը կամ իրենց հիմքերը կ'անցնեն Ազրբայճանի հարաւորեւ ճակատագրութիւնը հովանաւորելու համար, թէ Պաքու զօրակի կը կանգնի չեչեն ըմբռնողական գործողութիւնները»:

Ռուսիայի ղեկավարները կը համարեն Մ. Նահանգներու քննադատութիւններուն նկատմամբ արտայայտուած անհանգստութիւնը շահամանափակուցաւ կառավարական շրջանակներով: Պաքուի մէջ քաղաքական արուեստի եւ նորարարութեան կեղբոնի սնորհէն Մուսթաֆայ Ահմադովը խստօրէն քննադատեց Մ. Նահանգներու կեցողութիւնը վերաբերեալ «որչինչ է՝ բացի ղեկիւղիցէն հետ հարցազրույցի մը ընթացքին»: «Մէկ կողմէ Մ. Նահանգները կ'անցնեն իրենց հիմքերը կամ իրենց հիմքերը կ'անցնեն Ազրբայճանի հարաւորեւ ճակատագրութիւնը հովանաւորելու համար, թէ Պաքու զօրակի կը կանգնի չեչեն ըմբռնողական գործողութիւնները»:

Ռուսիայի ղեկավարները կը համարեն Մ. Նահանգներու քննադատութիւններուն նկատմամբ արտայայտուած անհանգստութիւնը շահամանափակուցաւ կառավարական շրջանակներով: Պաքուի մէջ քաղաքական արուեստի եւ նորարարութեան կեղբոնի սնորհէն Մուսթաֆայ Ահմադովը խստօրէն քննադատեց Մ. Նահանգներու կեցողութիւնը վերաբերեալ «որչինչ է՝ բացի ղեկիւղիցէն հետ հարցազրույցի մը ընթացքին»: «Մէկ կողմէ Մ. Նահանգները կ'անցնեն իրենց հիմքերը կամ իրենց հիմքերը կ'անցնեն Ազրբայճանի հարաւորեւ ճակատագրութիւնը հովանաւորելու համար, թէ Պաքու զօրակի կը կանգնի չեչեն ըմբռնողական գործողութիւնները»:

Մոսկուայի մէջ պաշտօնատարներուն մեծամասնութիւնը համոզուած է, որ Ռուսիա կրնայ օգուտ քաղել Ալիբեկովի իշխման ընթացքին:


«Ռուսիա չի կրնար ինքզինքին թողնուիլ, որ պարտուի Ազրբայճանի մեծ խաղին մէջ», կ'ըսէ կուսակցական մասին կրեմլին ղեկավարներէն: «Ռուսիա կրնայ վարչակարգի (Ազրբայճանի) կայունացման երաշխաւորող ըլլալ միեւնոյն ատեն լուծելով կովկասի մէջ իր ազդեցութեան վերականգնման հարցը», կ'ըսէ ռուս վերլուծաբանը:

ԻԿՈՐ ԹՈՐՊՊԵՐՈՎ
«Նուրբ լիմիտ»

ՕՐԱՏԵՏՐ

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

ՇՆՈԱՏԵՍԻԼ



ՏԵՆ ԵՆԿՆԱԿԱՆ ՊԵՏՆԱԿԱՆ (Հայաստանի Հանրապետության) Ստորագրված, Ստորագրված, Ստորագրված... (Legal notice text)

7:30- Արաբերեն լուրեր
8:00- Ռոմանտիկ խաղեր
9:30- Մուսիկի
11:20- Աստղեր
11:30- Արաբերեն լուրեր
11:35- Առօրեայ
12:00- Արաբ ֆիլմազար
13:30- Արաբ ֆիլմազար
14:30- Արաբերեն լուրեր
15:00- Ղանաչի Ղանաչի
16:00- Արաբ յայտագիր
17:00- Խաղեր
18:00- Արաբ յայտագիր
19:00- Տեղական ֆիլմազար
19:30- Արաբերեն լուրեր
20:00- Ռոմ Բիթ
20:30- Քիսսու Նուպ
21:30- Տիվերթիսական յայտագիր
22:30- Երիտասարդական յայտագիր
23:30- Արաբերեն լուրեր
00:00- Վաերագրական


Advertisement for Semerjian Optical. Includes text: 'ՄՈՒԹԱՔՊԱԼ 7:00- Այամ Այ Սալահ 11:05- Մեքքե...' and 'Semerjian OPTICAL ԿԸ ԾԱՆՈՒԹՅԱՆԷ'.

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ LISTE DE MARIAGE
Պուրճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, Շոթ մուտք, Սանքըր Պլանցոյն: Կառատուը ապահովուած:

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ LISTE DE MARIAGE
Պուրճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, Շոթ մուտք, Սանքըր Պլանցոյն: Կառատուը ապահովուած:

Advertisement for Semerjian Optical. Includes text: 'Վարպետ ազա- մանդաշարներ SM հաստատություն հա- մար: Հեռ. 01 - 259265:' and 'Semerjian OPTICAL ԿԸ ԾԱՆՈՒԹՅԱՆԷ'.

Advertisement for VANLIAN lighting. Includes text: 'VANLIAN lighting' and 'Bourj - Hammoud Tel: 01-265935 - 258152/3'.



Bourj - Hammoud Tel: 01-265935 - 258152/3



Advertisement for Semerjian Optical. Includes text: 'Semerjian OPTICAL ԿԸ ԾԱՆՈՒԹՅԱՆԷ' and 'Պուրճ Համուտ «Արմենիա» պողոտայ Շեռ. 01-268657, Fax - 01-260756'.

Advertisement for A.N.T.S. Includes text: 'A.N.T.S. 2000 - 2001 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՆ' and 'Մանրամասնութեանց համար դիմել քարտուղարութեան:'.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



«ԱՄԻՍ-2000»

ՄԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ԵՒ ՃԱՓՈՆ ՀԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ



Ապտալյա Ուաքար (Մեուտ, Արաբիա) կը փորձէ կասեցնել Լի Տոնկ - Կուրը:

«ԱՄԻՍ-2000»-ի ֆուտբոլի մրցաշարքի կիսաարտական հանգրուանի մրցումներուն, երէկ Մարպական Աւանի դաշտին վրայ Մեուտական Արաբիա եւ Ճափոն յաղթանակներ արձանագրելով ապահովեցին աւարտական հանգրուանին իրենց տոմսերը:

Առաջին մրցումը, որ տեղի ունեցաւ Մեուտական Արաբիայի Հարաւային Քորէայի միջեւ, վերջ գտաւ առաջինի յաղթանակով. 2-1 արդիւնքով: Թալալ Միշալ նշանակեց Մեուտական Արաբիայ երկու կողմը (76րդ եւ 80րդ). իսկ Լի Տոնկ-Կուր՝ Հարաւային Քորէայի բաւական ուշացած կողմ (93րդ): Իր նշանակած այս կողմն էր, այժմ Տոնկ-Կուր, Նասիիր Թաքաւարայի եւ Աքիմուրի Նիշիպաուայի (Ճափոն) հետ միասին կը գրաւէ կոլպորրըներու պարագլուխի դիրքը (5 կողմ):

Այսպիսով, Մեուտական Արաբիա յաջողաբար ճիշդ անգամ ըլլալով կը հասնի աւարտականին: Անկա երեք անգամ յաջողած է տիրանալ բաժակին (1984ին, 1988ին եւ 1996ին), իսկ չորրորդին պարտուած է Ճափոնէն (1992ին):

Այսպիսով, ուրք տարի ետք Մեուտական Արաբիա լաւագոյն առիթը ունի իր մարպական «վրէժը» լուծելու Ճափոնէն, երբ անոր դէմ յանդիման գալ Կիրակի օր, Մարպական Աւանի դաշտին վրայ, աւարտական հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ ժամը 18:45ին:

Մեուտական Արաբիա - Հարաւային Քորէա մրցումէն ետք նոյն դաշտին վրայ տեղի ունեցաւ կիսաարտական հանգրուանի երկրորդ մրցումը, որուն ընթացքին Ճափոն 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Զինաստանը, հակառակ անոր, որ անկա մինչեւ 53րդ վայրկեանը 2-1 արդիւնքով էտ մնացած էր: Ճափոնի կողմը նշանակեցին Ֆան Չիլի (21րդ)՝ սխալմամբ իր բերդէն ներս, Աքիմուրի Նիշիպուրի (53րդ) եւ Թոմաքալու Միտի (61րդ), իսկ Զինաստանի կողմը՝ Քի Հոնկ (30րդ) եւ Եանկ Շէն (48րդ):

Ճափոնի համար տիտղոսին տիրանալը պիտի ըլլայ շատ կարեւոր, որովհետեւ նախ անկա ցարդ մէկ անգամ շահած է բաժակը, իսկ երկրորդը՝ 2002ի Մոնտիալը հիւրընկալող Ճափոն (Հարաւային Քորէայի հետ միասին), կ'ուզէ տիտղոսի մը տիրանալով փաստել, որ կրնայ լաւ արդիւնք արձանագրել Մոնտիալին:

ՃԱՏՐԱԿ

ՔՐԱՄՆԻՔ - ԳԱՍՊԱՐՈՎ՝ 6,5 - 4,5

Լոնտոնի մէջ տեղի ունեցող ճատրակի երկու հսկաներուն՝ Կերի Գասպարովի եւ Վլատիմիր Բրաննիքի միջեւ «մրցաշարքին» 11րդ հանդիպումը երէկ վերջ գտաւ հաւասարութեամբ, այսպէսով, Քրամնիք իր ունեցած երկու կէտի առաւելութիւնը պահեց Գասպարովի վրայ: Այժմ արդիւնքը կ'ընթանայ 6,5 - 4,5, ի նպաստ Քրամնիքի:

Երէկուան հանդիպումին, երկու վարպետները 41րդ շարժումին համաձայնեցան աւարտել հաւասարութեամբ:

Ստորեւ՝ մնացեալ հանդիպումներուն յայտագիրը.

- 12րդ հանդիպում - Շաքար, 28 Հոկտեմբեր
- 13րդ հանդիպում - Կիրակի, 29 Հոկտեմբեր
- 14րդ հանդիպում - Երեքշաբթի, 31 Հոկտեմբեր
- 15րդ հանդիպում - Հինգշաբթի, 2 Նոյեմբեր
- 16րդ հանդիպում - Շաքար, 4 Նոյեմբեր:

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ

ՏԵՍԹԻՆԱՅԻ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Տրանսալի հեծելանորդ Փասքալ Հերվէ եղաւ Տեսթինս խումբին 9րդ եւ վերջին անգամը, որ ընդունեց, թէ թմրեցուցիչ գործածած է:

Ան իր այս յայտարարութիւնը կրկտարեր իր նախկին խումբին խմբապետ Ռիշար Վիրէնքի այն խոստովանութիւններէն ետք, թէ թմրեցուցիչ գործածած է:

«Այո», իրանիչ դեղեր գործածեցի, թէեւ այս մէկը յայտարարելը տեւեց երկուրուկէ տարի: Այդ մէկը կրնայ յայտարարել շատ աւելի առաջ, եթէ մեզմէ ինչ հեծելանորդ երկու տարի առաջ «չբռնուէր» Տրանսալի շրջակայքին ընթացքին», կ'ըսէ Հերվէ իր խոստովանութեան ընթացքին:

Վերջին հինգ եղանակներուն Հերվէ եղած է Վիրէնքի աջ բազուկը: Ան ապա միացած է իտալական Փոլիսի խումբին, երբ հինգ անգամ Տրանսալի շրջակայքը շահած Վիրէնք լքելով Տեսթինս միացած է Փոլիսի (1999ին):

Երկու հեծելանորդներն ալ աւելի քան մէկ տարիով պիտի կախակալուին իրենց երկրին հեծելարշաւի ֆետերասիոնի կողմէ:

Վիրէնք սակայն կրնայ այլ պատիժ մըն ալ ստանալ դատարանին կողմէ, եթէ փաստուի, որ ան իր խմբակիցները քաջալերած է, որպէսզի անոնք թմրեցուցիչ գործածեն:

Անոնց նախկին խմբակիցը՝ Լորան Պրոնշար դատարանութեան ընթացքին քսած էր, թէ շատ հաւանաբար ինք թմրեցուցիչի ադեցութեան տակ էր, որ 1997ին հանդիսացած էր աշխարհի ախոյեան:

Պրոնշար, որ տիտղոսին տիրանալէ ետք քննութիւններու ենթարկուած էր, անոր արտօնուած էր, որ կրնայ պահել տիտղոսը, երբ ան բժշկական վկայական ստացած էր:

ՏՐԱՆՍԱՅԻ շրջակայքի կազմակերպիչները երէկ հրապարակեցին 2001ի շրջակայքին յայտագիրը, որ անոր պատմութեան ընթացքին կարճ շրջակայքերէն մէկն է: Անկա կը սկսի Յուլիս 7ին Տէօնքերքէն եւ կ'աւարտի 29ին՝ Փարիզի մէջ, ընդամենը՝ 3642 քմ.:

Նախապէս երկու այլ շրջակայքեր ասոր նման եղած էին կարճ:

Յառաջիկայ տարի տեղի ունենալիք շրջակայքին լեռնային հանգրուանները պիտի յաջորդեն իրարու եւ անոնք տեղի պիտի ունենան մէկ շաբթուան ժամանակամիջոցին:

Ստորեւ՝ Տրանսալի շրջակայքին 2001ի յայտագիրը, որ երէկ հրապարակուեցաւ Փարիզի մէջ:

Յուլիս 7. Բացման մրցումը՝ Տէօնքերքէն: Ժամացոյցի դէմ մրցում (8 քմ.):

Յուլիս 8. Ա. հանգրուան, Սէն Օմէրէն՝ Պուլուէլը Սիւր Մէր (198 քմ.):

Յուլիս 9. Բ. հանգրուան, Քալէէն՝ Անվէրս (200 քմ.):

Յուլիս 10. Գ. հանգրուան, Անվէրսէն՝ Սրբէնկ (199 քմ.):

Յուլիս 11. Դ. հանգրուան, Հիւլէն՝ Վերտէն (210 քմ.):

Յուլիս 12. Ե. հանգրուան, Վերտէնէն՝ Պար Լը Տիլը, խմբային ժամացոյցի դէմ մրցում (67 քմ.):

Յուլիս 13. Զ. հանգրուան, Քոմէրսիէն՝ Սթրապպուրի (220 քմ.):

Յուլիս 14. Է. հանգրուան, Սթրապպուրիէն՝ Քոմմար (162 քմ.):

Յուլիս 15. Ը. հանգրուան, Քոմմարէն՝ Փոնթարիէ (220 քմ.):

Յուլիս 16. Թ. հանգրուան, Փոնթարիէէն՝ Էքս Լէ Պէն (185 քմ.):

Յուլիս 17. Ժ. հանգրուան, Էքս Լէ Պէնէն՝ Լայֆ Տիլէյ (208 քմ.):

Յուլիս 18. ԺԱ. հանգրուան, Կրէնպիլէն՝ Ծամբու, ժամացոյցի դէմ մրցում (32 քմ.):

Յուլիս 19. Հանգրուանի օր:

Յուլիս 20. ԺԲ. հանգրուան, Փերիինսէն՝ Աքս Լէ Թէրս (166 քմ.):

Յուլիս 21. ԺԳ. հանգրուան, Տուայէն՝ Սէն Լարի Սուլան (222 քմ.):

Յուլիս 22. ԺԴ. հանգրուան, Թապէն՝ Լի Արտիտէն (144 քմ.):

Յուլիս 23. Հանգրուանի օր:

Յուլիս 24. ԺԵ. հանգրուան, Փոլէն՝ Լաւոր (226 քմ.):

Յուլիս 25. ԺԶ. հանգրուան, Քապէլաքապէնէն՝ Սարան (224 քմ.):

Յուլիս 26. ԺԷ. հանգրուան, Պրի Լա Կայարտէն՝ Մոնիլիւրն (200 քմ.):

Յուլիս 27. ԺԸ. հանգրուան, Մոնիլիւրնէն՝ Սէն Աման Մոնրոն, ժամացոյցի դէմ մրցում (61 քմ.):

Յուլիս 28. ԺԹ. հանգրուան, Օրլէանէն՝ Էվրի (160 քմ.):

Յուլիս 29. Ի. հանգրուան, Բորպէյէն՝ Փարիզ (150 քմ.):

ՓՈՐԹՈՒԳԱԼ ԿԸ ՄԵՐԺԷ «ՆՈՒՔԱՄՓ»-ԻՆ ՄԷՋ ՄՐՑԻԼ

Փորթուգալի ֆուտբոլի ազգային խումբը մերժեց յառաջիկայ Դեկտեմբեր 22ին Պարսելոնայի դաշտին՝ «Նուքամփ»-ին մէջ տեղի ունենալիք ֆուտբոլի միջազգային մրցումին մասնակցելու, յայտնելով, որ յայտնապէս դժգոհ մնացած է անցեալ Շաքար օր նոյն այդ դաշտին վրայ տեղի ունեցած Պարսելոնա - Ռէալ Մատրիտ մրցումին ընթացքին պարսելոնացիներուն, որ Պարսելոնայի համակիրները վատ ընդունելութեամբ մը դիմաւորած էին իրենց ակումբին մաս կազմող մարպիկը՝ Լուիս Ֆիլիպը, որ այս պարագային մաս կը կազմէ Փորթուգալի ֆուտբոլի ազգային խումբին: Հետեւաբար այն վախիկ պատճառով, որ նոյն քանակ կրնայ կատարել այդ օրը, երբ Փորթուգալ մրցի Քապէլաքապէնի ֆուտբոլի ազգային խումբին դէմ:

Փորթուգալի ֆուտբոլի ֆետերասիոնին կողմէ կատարուած յայտարարութիւնը կ'ըսէ, «Կր հասկնանք այն իրականութիւնը, որ որեւէ խումբի համակիրները կ'ատեն մրցակից կազմին բոլոր մարպիկները: Սակայն այս մէկը չի նշանակեր, որ անոնք իրենց պատմութիւնը առնելով մենք ինչ կրնան ընել, այնպէս ինչպէս պատահեցաւ Ռէալ Մատրիտի դէմ: Յայտնապէս անընդունելի կը գտնենք փորթուգալի մարպիկ Լուիս Ֆիլիպի անձին ղեմ կատարուած այդ վատ վերաբերմունքը: Հետեւաբար այս մէկը տեսնելով, ինչպէս պիտի կատարուի մարպիկները ազգային խումբ հրաւիրելը»:

● ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ յետապահ Յրանք տը Պէօր, ամէն գնով կ'ուզէ իր մարպիչին՝ Լորէնս Սերա Ֆերերի հետ հանդիպում-ժողով մը ունենալ, նկատուի ունենալով, որ յաջորդաբար չորրորդ մրցումն ըլլալով, ան նկատի չ'առնուիր իրեն հիմնական մարպիկ:

Եղանակի բացման մրցումին, ան դաշտ ներկայացած էր հիմնական կազմին հետ, սակայն հետպիտէտ իր դիրքը կորսնցուցած է Էմանուէլ Փըթիի եւ Միքայէլ Ռայլի կողմէ ներկայութեան:

Յրանքի եղբայրը՝ Ռոնալտ սակայն այս մտահոգութեան մէջ չի գտնուիր, որովհետեւ արդէն իսկ ամբան ընթացքին լքած էր Պարսելոնան եւ փոխանցուած Ռէյնսըրկի:

ԵՈՒ. Է. ԷՏ. Ա.

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԴԺՈՒԱՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ՏԱՐԱԻ

ԵՈՒ. Է. ԷՏ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքի Բ. հանգրուանի երթի մրցումներուն, երէկ Լիվերփուլ դժուարութեամբ պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սլովան Լիպերէքը (Չեխիա), 1-0 արդիւնքով, շնորհիւ Էմիլ Հեպրիի նշանակած կողմին (87րդ):

1860 Միւնիխ 3-2 արդիւնքով պարտուած հեռացաւ Հայմըթտի (Շուէտ) դաշտէն:

Պարտութիւններ կրեցին նաեւ Սելթա Վիլո, Այաքս Ամսթերտամ եւ Շտուրկարթ, բոլորն ալ 1-0 արդիւնքով:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Հերթա Պերլին (Գերմանիա) - Ամիքա Կրոնշի (Լեհաստան) 3-1

Ինքեր Միլան (Իտալիա) - Վիթէս Արնհէմ (Հոլանտա) 0-0

Կարմիր Աստղ Պելկրատ (Շուէտ) - Սելթա Վիլո (Սկոտլանդ) 1-0

Բրեյթ (Յունաստան) - Սլաւիա Փրախա (Չեխիա) 2-2

Ս. Է. Ք. Արքիթ (Յունաստան) - Հերթա (Գերմանիա) 5-0

Պաքս (Չեխիա) - Տեյեյնուրտ Ռոթթերտամ (Հոլանտա) 1-2

Հայմըթտ (Շուէտ) - 1860 Միւնիխ (Գերմանիա) 3-2

Փարմա (Իտալիա) - Տիւսանո Չաղրէյ (Իտալիա) 2-0

Ըսփանիոլ (Սկոտլանդ) - Կրաք (Աւստրիա) 4-0

Լիվերփուլ (Անգլիա) - Սլովան Լիպերէք (Չեխիա) 1-0

Լոյան Սփոր (Չեխիա) - Այաքս Ամսթերտամ (Հոլանտա) 1-0

Վիլա Քրաքով (Լեհաստան) - Փորթո (Փորթուգալ) 0-0

Քիլոն Ինսպրուք (Աւստրիա) - Շտուրկարթ (Գերմանիա) 1-0

Ռայո Վալեքանո (Սկոտլանդ) - Վիլորի (Գերմանիա) 1-0

Նաւթ (Յունաստան) - Պոտափէշթ (Հունգարիա) 2-1

Պորտո (Յունաստան) - Սելթա (Սկոտլանդ) 1-1

Լոքոմոթիվ Մոսկու (Ռուսիա) - Ինքեր Պրաքիսլա (Սլովակիա) 1-0

Յ. Բ. Պրիմ (Գերմանիա) - Սէնթ Կալըն (Չեխիա) 2-1

Լիվըրմ (Նորվեգիա) - Այաքս (Սկոտլանդ) 1-3

ՊՈՒՆՏՐՍՆԻԿԱ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 10ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուլտըսիկա) 10րդ հանգրուանի բացման մրցումը տեղի կ'ունենայ այսօր, նախավերջին դիրքը «գրաւող» Քոթպուս կը հիւրընկալէ Պոխուր (14րդ): Երկու կազմերուն համար ալ յաղթանակը պիտի ըլլայ կարեւոր, որպէսզի անոնք խոյս տան վտանգաւոր գոտիէն:

Վաղը տեղի պիտի ունենան վեց մրցումներ, իսկ Կիրակի օր՝ երկու:

Պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնիխ վաղը պիտի այցելէ Վերտըր Պրեմերնի դաշտը (15րդ):

Պայէրն, որ անցեալ շաբաթավերջին պարտութեան մատնելէ ետք 1860 Միւնիխը գրաւեց պարագլուխի դիրքը, դարձեալ դաշտ պիտի ներկայանայ առանց խմբապետ Շթեֆան Էֆենպերկի, որ տակաւին կը մնայ վիրաւոր:

Պայէրնի փոխ նախագահ Քարլ - Հայնց Ռուրնիկէ իր մարպիկներէն կը պահանջէ յաղթելու վճանակութեամբ դաշտ ներկայանալ եւ ոչ թէ Հելմիպոլի դէմ իրենց կատարած մրցումին նման («Չէմփիլըն Լիկ»), երբ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էին:

4րդ դիրքը գրաւող Պորտուա Տորթուան կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ վաղը իր դաշտին վրայ հիւրընկալէ Քայլըրսլաուքըրնը (8րդ): Հիւրընկալ կազմէն պիտի բացալի Կիմերիացի միջնապահ Սանտէյ Օլիսէի (Վիրաւոր): Քայլըրսլաուքըրնի միջնապահ Եուրի Ճորթայէֆ ապաքինած ըլլալով դաշտ պիտի ներկայանայ հիմնական կազմին հետ:

Շայլէ (3րդ), որ պիտի հիւրընկալէ Պայէրն Լեւըրքուրընը (6րդ), դաշտ պիտի ներկայանայ առանց լիպերո Օլաֆ Թոնի (Վիրաւոր):

Ստորեւ՝ 10րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ

Քոթպուս - Պոխուր

ՎԱՂԸ

- Հանկա Ռոսթր - Վոլֆսպուրկ Ռայթրիախիկ - Համպուրկ
- Այնթրախը Տրանֆորթ - Տրայպուրկ
- Վերտըր Պրեմերն - Պայէրն Միւնիխ
- Պորտուա Տորթուան - Քայլըրսլաուքըրն
- Շայլէ - Պայէրն Լեւերքուրն

ԿԻՐԱԿԻ

1860 Միւնիխ - Հերթա Պերլին

Քեօլն - Շտուրկարթ

